ՊՈԼՍՈՅ—ՏԱՐԻ—ԹԻՎ—2443 ՇԱԲԱԹ—6—ՀՈԿՏԵՄԲԵՐ—Ն. Տ—48—ՀՈԿՏԵՄԲԵՐ—1879

ԳԱՅՄԱՆԸ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 10 Մէճ.
» » Գաւառաց » 2 Լիրա
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 5 Մէճ.
» » Գաւառաց » 1 Լիրա
Օտար երկիրներու » 50 Ֆր.
Ցանուցման տողը մէկ անգամի համար 3 զուարուչ, երկու անգամի համար 2 զրչ. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլլայ։
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արժ։

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՀՈՐԵԱՅ

ԳԱՅՄԱՆԸ

Գուրս գնացած լրագրաց ճանրու ծախքը խմբագրութեան վրայ է։
Լրագրոյս վերաբերեալ նամակներ որ և իցէ գրութիւն Խմբագիր—Տնօրէնին ապահովութիւն, Գալաթիա Սանտրքճըլար Ճատտէսի թիւ 198, Նօրօ խան, Մասխի գրասենեակը։
Ճանրու ծախքը չվճարուած նամակ [illegible]։
Չ[illegible] կ. յղուած, [illegible]

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԵՒ ՏՆՏԵՍ...

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 6 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Արևելեան Ռումելիի՝ լորտ Պիքոնսֆիլտի բեղմնաւոր երևակայութենէն ծագած այս դաւառին՝ մէջ անբարեկարգութիւնը կը շարունակէ, 'ի ՁԼաս Իսլամայ։ Ալէքօ փաշան ճանապարհորդութիւն մ'ընելու ելած էր երբ թէ երկրին վիճակն աչքէ անցունելու, բայց իրապէս ժողովրդեան իրմէ դոհունակութիւնը ցուցնելու համար. բայց ազգային զօրաց հրամանատար կարգուած Գերմանացի Շթրեքէր, Բէշկա փաշան Պուլղարաց զինեալ վիճակին անպատեհութիւնները տեսնելով, ընդօրինակ խորհուրդին մէջ առաջարկեր էր թէ ըստ որում Իսլամաց զէնքը կ'առնուի, պէտք է նաև Պուլղարք անզէն լինին։ Մեծամասնութիւնն այս առաջարկը մերժեր էր։ Այնուհետև Շթրեքէր փաշան Կ. Պոլիս եկաւ և վերադարձաւ 'ի Փիլիպէ և հարկաւ իւր գաղափարն 'ի գործ դնելու պիտի աշխատի։ Շթրեքէր փաշան իւր առաջարկութեան պատճառաւ Պուլղարաց ատելի եղած է։ Արևելեան Ռումելիի Յոյներն ալ ներկայ վիճակէն գոհ չեն, և աղերսագիր մը պիտի տան եղեր դաւառական ընդհանուր ժողովին՝ պահանջելով որպէս զի Պուլղարաց զէնքն առնուի։ Իսկ Իսլամաց դանդատները բոլոր աշխարհ կը լցնեն, և Ֆիլիփոփոլիս լրագրերն անոնց ազերսագրերը կը հրատարակէ՝ ոչ միայն Ալէքօ փաշայի ուղղեալ, այլ և դաշնադիր տերութեանց։ Արևելեան Ռումելիի Իսլամք՝ Պուլղարաց կողմէ կրած հալածանաց դէմ՝ ունեցած դանդատներնին Եւրոպական մեծ տերութեանց ատեանը հանելով՝ ճարակիչ օրինակ մը կուտան նաև Փոքր Ասիոյ քրիստոնէից, որք ոչինչ նուազ դանդատելու իրաւունք ունին Չերքէզներէ, Քիւրտերէ և ուրիշներէ, և որոց համար, ճիշդ իրենց եղածին պէս, արդարութիւնը շատ հեռի է 'ի գործ դրուելէ։ Եթէ Փոքր Ասիոյ պաշտօնատարք իրենց պարտքը ճանչէին, եթէ այժմ Պուլղարք պաշտօնատարք արդարութիւնն ազգային կրից չ'զոհէին, հարկաւ Եւրոպական տերութեանց ատեանը բողոքելու հարկ չէր մնար և Արևելից խաղաղութիւնը չէր վրդովեր, բայց երկու չափու և երկու կշռոյ սկզբունքն, որ պատճառ եղաւ այնչափ չարեաց, կը շարունակէ իւր ՁԼասակար ազդեցութիւնն, և այս գեղեցիկ երկիրներն անբարեկարգութեան տեսարան կ'ընէ։ Ե՞րբ պիտի վերջանայ այս վիճակը.—շատ յանդուգն լինելու է մէկն՝ որ այս հարցման պատասխան տալու համարձակի։

* * *

Աւստրօ-Հունգարիոյ արտաքին գործոց նոր նախարար Պ. Հայմերլէ իւր պաշտօնի մտնելուն առթիւ Աւստրօ-Հունգարական դեսպաններուն շրջաբերական մ'ուղղեց, որ ի-բրեն առաջին պաշտօնական յայտարարութիւնն է, և ուր Աւստրօ-Հունգարական աշխարհավարութեան խաղաղասիրական կերպարանքը ծանուցանելով կը խոստանայ Անդրաշի կոմսին սկսած աշխարհավարութիւնը շարունակել։ Նոր նախարարն իւր առաջին աշխատութիւնը ներքին վարչական գործոց պիտի նուիրէ՝ քանի թէ դիւանագիտութեան, և Աւստրիոյ և Հունգարիոյ նախարարք վիէննա պիտի գումարին երկու կողմանց ընդհանուր պիւճէն որոշելու համար։ Այս պաշտօնական ցոյցերուն նայելով, չափէն աւելի կարևորութիւն չկրնար տրուիլ քանի մը լրագրաց մէջ տեսնուած այն զրոյցներուն, որոց նայելով՝ Գերմանիա և Աւստրօ-Հունգարիա դաշնակցութիւն մը կազմեր են և զինուորական պայմանագրութիւն մը պիտի կնքեն եղեր։ Հեռագիր մը կըսէ թէ յիշեալ դաշնակցութիւնը կամ պայմանագրութիւնն ստորագրուեր է, բայց հեռագիրք այնչափ սուտեր կը թռցընեն, որ անոնց ամեն պարունակութեան հաւատալ դժուարին է։ Կորչաքով իշխանը գրեթէ հարիւր անգամ պաշտօնական եղաւ՝ և տակաւին Պատէն է։ Պերլինէն Քօրէսպոնտանս Բիւրոյի գրուած նամակ մը կ'ըսէ թէ Կորչաքով իշխանը Պերլինէն անցնելու ժամանակ պիտի տեսակցի Պիսմարք իշխանին հետ, թէև արդէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ իւր տեղ Պ. Վալուէֆ անցած է։

Այս լուրն որչա՞փ ստոյգ է արդեօք,—Պէտք է լրագրաց մէջ պաշտօնական յայտարարութիւնը տեսնել որպէս զի կասկած չմնայ վաւերականութեանը վրայ։ Դեռ քանի մ'օր առաջ, երբ Անդրաշի կոմսն հրաժարեցաւ, Աւստրիոյ կայսրը թէ՝ անոր և թէ՝ յաջորդին նամակներ ուղղեց, միոյն ծառայութիւններն և միւսին արժանիքը գովելով։ Զեմք կարծեր որ Ռուսիոյ կայսրն իւր բազմաժամակեայ նախարարն այնպէս անշուք կերպիւ պաշտօնէ ձգէ, ինչպէս Ռիւթէրի հեռագիրը ՀԿը ծանուցանէ. և սպասելու է որ Բեղրսպուրկի լրագիրք ստոյգը ծանուցանեն։ Ռուսիոյ Գերմանիոյ և Աւստրիոյ յարաբերութեանց վրայ հեռագրական լուրերն ա՛յնչափ շփոթ և միգապատ են, որ ասոնց մէջ ստոյգը դանել դրեթէ անկարելի է։

* * *

Թայմզ լրագրին Կ. Պոլսոյ թղթակիցը՝ Պ. Մաքէնզի Ուօլէս՝ Փոքր-Ասիոյ բարեկարգմանց խնդրոյն վրայ հոկտ. 3 թուականաւ հետևեալ երկայն հեռագիրը քաշած է.

"Փոքր-Ասիոյ մէջ բարեկարգմանց յոյսերը փայլուն լինելէ հեռի են, և ծանր պատճառ կայ վախնալու թէ Դուռն հնար եղածին չափ քիչ բան ընելու մտադիր է։ Կը յիշուի թէ անցեալ տարի Սէր Հէնրի Լէյարտ ա՛ր քան զ ժուարութիւն ունեցած էր Լորտ Սալիսպըրիի արդէն չափաւոր առաջարկութիւնները Դրան կոգմանէ դո՛նէ սկզբամբ ընդունելու տալու համար, և այժմ կը տեսնեմք թէ Դուռն այն ժամանակ տուած անորոշ խոստմանց ալ մէկ մեծ մասն այժմ գործադրութեան եղանակին մէջ մէկ կողմ պիտի թողու։

"Լորտ Սալիսպըրիի յատկապէս յանձնարարած երեք կէտերն էին՝ վճռաբեկիչ ատեանի հաստատութիւն, երմտական հսկող տեսչայ անուանում, և ազգու ոստիկանութեան մը կազմութիւն։ Փոխանակ վճռաբեկիչ ատեաններու, արքունական կողմէ առաջարկեցաւ դատական շրջան տեսուչներ անուանել, և Անդղլիական դեսպանն հաւանութիւն տուաւ այս բարեփոխման։ Բայց երբ յայտարարեցաւ թէ այս անօրէնութիւնն 'ի գործ պէտք է դնել, Դուռը չկրցաւ այն պիսի օտարազգիներ դանել, որք ըստ բաւականին լեզուագիտութիւն և դատական հմտութիւն ունենային, և հետևաբար բան մը չկրցաւ լինիլ։

"Երմտական բարեկարգումն այժմ 'ի գործ պիտի դրուի քիչ մը տարբեր եղանակաւ, բայց իրապէս միևնոյն արդիւնքով։ Դուռն, օտար ճնշման ներքև գործել չթուելու համար՝ իւր սովորական միջոցին դիմեց, այսինքն երմտական բարեկարգումն ալ տերութեան բոլոր երկիրներուն վրայ տարածեց, և տպա խնդրեց Անդղիոյ, Գաղղիոյ և Իտալիոյ դեսպաններէն, որ երմտական հսկող տեսչի պաշտօնին յարմարութիւն ունեցող օտարազգիներ յանձնարարեն։ Անդղիա՝ երեք, Գաղղիա մէկ կամ երկու անձ առաջարկեցին, իսկ կըսուի թէ Իտալիա ձեռնպահ եղաւ։ Դուռը մէկ Անդղիացի և մէկ Գաղղիացի անուանեց, և երմտական հսկող տեսչ անուանեալ այս նոր տեսակ պաշտօնատարք երեք կարգի բաժնուած լինելով, Դուռն այդ երկու օտարազգաց պատիւ մ'ըրաւ դանք առաջին կարգի տեսուչ անուանելով։ Թէև չէր կրնար սպասուիլ որ երկու օտարազգիք ամբողջ տերութեան երմտական վարչութիւնը մաքրելու մասին մեծ գործ մը պիտի կրնան ընել, այսու ամենայնիւ ազդեցութեան տէր մի քանի անձինք այս անուանումներն ուղիղ ճամբու մէջ կարևոր քայլ մը կը նկատէին։ Ցայտնի էր թէ տերութիւնն երմտական հսկող տեսչի պաշտօնին մեծ շրջանակայ բաժնուած էր * և կը հետևէր բնականաբար թէ երմտական առաջին կարգի անցնիւր տեսուչ ամբողջ շրջանակի մը վրայ մեծ ազդեցութիւն պիտի ունենար։ Այս սկզբամբ՝ օտարազգի երկու տեսչայ ազդեցութիւնը բոլոր տերութեան դրեթէ մէկ երրորդ մասին վրայ պիտի տարածէր։

"Սակայն Դուռն այդ ստոյգ օտար միջամտութեան թոյլատրութիւն ընելու ամենափոքր դիտաւորութիւն չունէր։ Փոքր հնարք մ'ունէր ի պահեստի, զոր այժմ երևան հանեց՝ ի մեծ զարմացում և յուսավրիպութիւն անոնց՝ որք կը խորհէին թէ Դուռն երմտական լուրջ բարեկարգում մ'ի գործ դնելու վրայ է։

«Հնարքն յայտմ կը կայանայ թէ այդ առաջին կարգի կոչուած հսկող տեսուչներէն վեր ընդհանուր տեսուչ անուանով կարգ մը (եօթն հատ) պաշտօնատարք կը դրուին, որոց ամենն ալ ճշմարիտ Թուրքեր են։ Հետևաբար, առաջին կարգի պաշտօնատարք, որոց թուոյն մէջ դրուելու պատիւն ունեցած էին վերոյիշեալ երկու օտարազգիք, այս կերպիւ ստորակարգեալ պաշտօնատարք կը լինին, և խիստ փոքր ազդեցութիւն պիտի ունենան. իսկ նոքա, որք այս հնարքը մտածեցին, իրենց կարճատես ճարտարմտութեան յաջողութեանը համար կրնան ուրախանալ, որովհետև օտար հսկողութիւն մը ներմուծելու փորձէն անդամ մ'ի սպասս տուին։ Միւս կողմէն, այն միակ Անդղիացին, որ անտանած էր, իւր հրաժարականը գրկեց՝ Անդղիական կառավարութեան հաւանութեամբ։

«Գաղտ առաջարկեալ Գ. բարեկարգման, այն է ազգու ոստիկանութեան մը կազմութեան, ընելիք չատ բան չկայ։ Կիրիսի մէջ, ուր տեղական կառավարութիւն մ'ապահովեալ է կազմական կանոնադրի մը միջոցաւ, և ուր տարբերէն հաւաքուած դրամը Կ. Պոլսոյ կայսերական դանձուն կեդրոնացուցիչ և կլանող ձգտմանց դէմ՝ պաշտպանուած է, բաւական ազդու ոստիկանութիւն մը կազմուեցաւ։ Մինչ Հատ վիճան Սուրիոյ մէջ, և Անդղիացի գնդապետ Պլընթինի օժանդակութեամբ

* Թայմզի Պ. թղթակիցը կը մտնոյ թէ Փոքր-Ասիոյ քանի մը կարևոր վիլայէթներն, ընդ որս և Կարնոյ և Վանայ նահանգներն, երմտական այդ եօթն շրջանակայ մէջ չէին պարունակուած, ոչ ալ առանձին շրջանակ մը կազմուած էր այդ նահանգաց համար, և թէ հակառակ լրագրաց ոմանց կոգմանէ յայտնուած զարմացման, այս անհամանալի իրողութիւնը տակաւին չբացատրեցաւ ո՛չ պաշտօնապէս, ո՛չ ալ անպաշտօն կերպիւ։

Բէուֆ փաշան Ադրիանուպոլսոյ նահանգին մէջ այս ուղղութեամբ քիչ մը գործ տեսան։ Բայց Փոքր Ասիոյ գալով, մինչև յարդ անորոշ խոստումներէ զատ ուրիշ բան չկայ տակաւին։ Երկու տարի առաջ Օսմանեան կառավարութեան մէջ ընդունուած 18—20 Անգղիացի ապայներէն միայն 3—կը կը գործածուին, իսկ ատոնց և ոչ մին «մերնոր պաշտպանութեան» երկրին մէջ։

«Այս մեղադրելի անհոգութեան ամենախոշոր հետևանքներէն մի քանին արդէն ժամանակ առ ժամանակ ձեզ ծանուցանելու առիթ ունեցած եմ, և միշտ ալ նոր դէպքեր կը դիպուին։ Օրինակի ազագաւ, Նիկոմիդիոյ Ատաբազարը դաւառին թէ Քրիստոնեայ և թէ Իսլամ գիւղացի բնակիչք տակաւին ահաւ դողի մէջ են այն 40,000 առպառակ Զէյրէքներու երեսէն, որք վերջերս իրենց քով ընակեցուցուած էին. և թէպէտ քաղաքին գայմագամը վերջերս կողոպտուեցաւ և ոպաննուեցաւ Նիկոմիդիոյ ճանրուն վրայ, որ և է օգնութիւն չղրկուեցաւ այն 17 խեղճ ոստիկանաց, որոց յանձնուած է այդ խռովալի դաւառին մէջ բարեկարգութիւն պահպանելու գործը։

«Փոքր Ասիոյ ներկայ վիճակին մէջ եթէ փայլուն կէտ մը կայ, այն ալ Ապէտին պէյին ազգու ընթացքն է, որ Քիւրդստան ղրկուած էր իբրև յատուկ Քոմիսէր, և վերջերս Սեբաստիոյ կառավարիչ անուանեցաւ։ 30—40ի չափ Քիւրդ գլուխներ բռնել տալով աքսորեց, որք իրենց աւազակաբարոյութեամբն հանրածանօթ եղած էին, և հետևանքն այս եղաւ որ առ այժմ համեմատաբար կենաց ու ընչից քիչ մ'ապահովութիւն կայ այդ կողմերն։»

Այսպէս ահա կը խօսի Թայմսի Պ. թղթակիցը, բայց դժբաղդաբար Ապէտին պէյի «ազգու ընթացքն» ալ հանուած աղմուկներուն պէս յօդս ցնդեցաւ։ Արդէն ժամանակաւ դիտողութիւն ըրած էինք թէ քանի մը մանհապարտ քիւրդ գլուխներու աքսորման պատիժ սահմանելով, որ կըրնար օր մը ներուիլ, իրական բարեկարգումի մը կատարուած չէր լիներ ընդարձակ նահանգի մը մէջ, ուր երկար ժամանակէ ի վեր կենաց և ընչից անապահով վիճակն արդէն չափն ու սահմանն անցած էր։ Բայց Ապէտին պէյ, փոխանակ հինական բարենորոգումնց ձեռք զարնելու, որք գուցէ երկար ժամանակի կարօտ կը լինէին և որք արևելեան երիւակայութեանց վրայ գուցէ այնչափ ջերմ տպաւորութիւն մը չէին կրնար ընել, քանի մը հարեւանցի միջոցներ ի գործ դրաւ, և ինքնագոհութեան թմբուկը բարձրաձայն հնչել տալով՝ կուսակալութիւն մ'ստացաւ և հեռացաւ գործողութեան ասպարէզէն. իսկ փոխանակ այն «համեմատական ապահովութեան», զոր Պ. Մաքենզի Ուօլլէս կը յիշէ միամտական դոհութեամբ, այսօր կը տեսնեմք թէ Տիարպէքիրի նահանգին մէջ հարստահարութիւնք և բռնութիւնք առաջ անէն ո՛չ նուազ սաստկութեամբ կը շարունակեն, և քանի մը տեղերը աւելի սաստկացած են, որովհետև, ինչպէս դաւառաց մէջ ամեն անգամ կը տեսնուի, արդարութեան 'ի գործ դրուելէն զայրացած չարագործք այժմ դարձեալ ազատ ասպարէզ դտնելով՝ իրենց վրէժը կը լուծեն քրիստոնեայ տարաբաղդ ժողովրդէն, որ կառավարական անհոգութեան կամ պաշտօնական սխալանաց պատիժը կը քաշէ միշտ։ Ուստի ներելի է դիտել որ Թայմսի թղթակիցը կը սխալի «փայլուն կէտ» մ'երևան հանելով Փոքր-Ասիոյ ներկայ վիճակին մէջ, որ այնչափ դէշ է, օ՛րշափ դէշէր այն ժամանակներն՝ ուր բարենորոգմանց խօսքերն այսչափ յաճախ և այսչափ դրական կերպիւ չէին լսուեր։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա 17 հոկտ.

Սիմլայէն հեռաւորն կը գրեն.

Ռոպերթս զօրավարն Անգղիական զօրաց Քեռապիլ մանելուն առթիւ ըրած մէկ բանախօսութեանը մէջ ըսաւ թէ Պարա-Հիսարի միջնաբերդին քանդումն որոշուած է, թէ պատերազմական ծանր տուգանք մը պիտի դրուի երկրին (Աֆղանստանայ) վրայ, և թէ գլխաւոր քաղաքաց մէջ զինուորական կառավարիչներ պիտի անուանին, և այդ քաղաքները պաշարման վիճակի մէջ պիտի դրուին։ Ռոպերթս զօրավարն Անգղիական դեսպանութեան կատարածին հեղինակներն երևան հանողներուն համար մեծ վարձատրութիւն խոստացաւ։

Պերլին 17 հոկտ.

Կը հաւատան թէ Գերմանական բանակին պիտի ճանչնան այս տարի պիտի աւելնայ։

Բեռլրսպուրկ 17 հոկտ.

Կառավարութեան եկած հեռագրեր կը ծանուցանեն թէ Ալայի անապատին մէջ Թուրքերներու մեծ զօրութիւն մը հաւաքուած է Ռուսաց վրայ յարձակելու համար։

Պաքուէն մինչև Քրասնոյոսոսք Կասպից ծովուն տակէն դրուած հեռագրական թելն ամրոցցաւ։

Այս առաւօտ հասած հեռագիրք

Լոնտրա 18 հոկտ.

Լօրտ Սալիսպըրի երկիր իրիկուն գումարման մը մէջ բանախօսութիւն մ'ընելով, արտաքին աշխարհավարութեան վերայ խօսեցաւ, և ըսաւ թէ Կիպրոսի գրաւման նպատակն էր Ասիոյ կողմէն Ռուսիոյ սանձգութիւններն արգելուլ, թէ Եւրոպիոյ մէջ Սլաւ տարրին տարածումն արգիլելու հոգն Աւստրիոյ յանձնուած է, որ այսպէս Եւրոպական խաղաղութիւնը կ'ապահովէ։ Լօրտ Սալիսպըրի յարեց. «եթէ Աւստրիոյ վրայ յարձակում լինի, նա մինակ չպիտի գտնուի», և վերջացուց ըսելով թէ Աւստրօ-Գերմանական դաշնակցութիւնն ուրախութեան աղբիւր մ'է։

Լոնտրա 17 հոկտ.

Լորտ Տէրպի ընդդիմադիր կուսակցութեան գլուխ Լորտ Զարթինկթոն իւր ազարակը հրաւիրած լինելով, այս իրողութիւնն իբրև ապացոյց մը կը նկատուի թէ Լորտ Տէրպի պահպանողական կուսակցութիւնը վերջնականապէս թողած է։

Այնքանը կ'ապահովէ թէ Անգղիա Աֆղանստանայ պատերազմին հեռանայ վրայ Ռուսիոյ հետ բանակցիլ չպիտի ուզէ։

Մադրիտ 17 հոկտ.

Մլուրիի մէջ ջրոց մեծ ողողում մ'եղաւ և կը հաւատան թէ երեք հարիւրէ աւելի անձինք խեղդուած են։

Փարիզ, 17 հոկտ.

Ներքին գործոց նախարարը 23 քաղաքապետ պաշտօնանկ ըրաւ, որք սեպտեմբեր 27ի կոչունքին (ի պատիւ Օրիանաւորականաց գլուխ Շամբորդի կոմսին) ներկայ դտնուած էին, ինչպէս նաև ուրիշ երկու քաղաքացիք, որք (ծայրայեղ հանրապետական և ընկերվարական) Պ. Պլանքիի տրուած կոչունքի մը ներկայ դտնուած էին։

Սոֆիայէն իւր թղթակիցներէն միայն Պ. Քոչուբի հետ ունեցած խօսակցութիւնը կը հրատարակէ։ Հունգարացի հայրենասէրը (Պ. Քոչուբ) կը կարծէ թէ Հունգարիա կորսուած է։ Ըստ Պ. Քոչուբի, Աւստրօ-Գերմանական դաշնակցութեան անխուսելի հետևանքը պիտի լինի Գաղղիոյ և Ռուսիոյ միջև դաշնակցութիւն մը. և երբ պատերազմը ծագի, Աւստրօ-Հունգարիա Սլաւաց հարուածը միակ պիտի կրէ։ Պ. Քոչուբ Գաղղիոյ խորհուրդ կուտայ Ռուսիոյ հետ դաշնակից լինելու. կ'ըսէ թէ Պիսմարք իշխանը կը ջանայ, քննադատել Գաղղիա բայց ինք (Պ. Քոչուբ) համոզուած է որ Պիզմարք իշխանն Հանրապետութեան պետական մարդիկը չպիտի կրնայ խաբել, ինչպէս խաբեց երբեմն երրորդ Նաբոլէոն։

Լոնտրա 15 հոկտ.

Օսմ. Քոնս.		11 9/16
Փոխ.	1865	14 1/4
»	1869	13 1/2
»	1871	56 3/4
»	1872	21
»	1873	12 1/2
» Եգիպտ.		74 3/4
Անգլ. Քոնս.		97 11/16

Փարիզ 15 հոկտ.

Օսմ. Քոնս.		11,76 1/2
Դաղղ. Քոնս.	3 0/0	85,30
» »	» Նոր	85,20
» »	5 0/0	118,12 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թուրք լրագիրք կը ծանուցանեն թէ Բ. Դուռն Արևելեան Ռումելիի կառավարութեան հրաման ղրկեր է մարմնամարզական ընկերութիւնները լուծելու։

Վաղքի իւր այս առաւօտեան թուոյն մէջ կը ծանուցանէ թէ Բ. Դուռը մտադիր է մայրաքաղաքիս օտար թղթատարութեանց ջնջումը խնդրել դեսպանատուներէն։

Թուրք լրագիրը կրսէ թէ Օսմ. Միջազգային թղթատարութիւնը (փոսթ Ինթիւնասիոնալ Օթոման) կանոնաւոր կերպիւ գործելուն պատճառաւ, օտար թղթատարութեանց ոչ ևս հարկ կը մնայ։

Դահիրէէն Եւրոպական լրագրոյ քաշուած հեռագրոյ մը նայելով, Վսեմ. Աբրահամ փաշային Եգիպտոսի գործակատարութեան պաշտօնէն հրաժարելուն պատճառն այս է եղեր թէ Ն. Վսեմութիւնը Նաբոլի նստող նախորդ Խըտիվ Իսմայիլ փաշային հետ յարաբերութիւն ունի եղեր, և թէ արդի Խըտիվ Թէվֆիք փաշան կը հակառակի եղեր այս բանին։

Ժամանակէ մ'ի վեր, Թուրք կանայք՝ որոց այրերը պատերազմի ժամանակ մեռած են, թոշակ առնելու համար ելմտական պաշտօնատունը կը դիմեն, և ըստ որում չեն կրնար գրաւոր ընդունիլ, աղմուկներ և կռիւներ կը հանեն։ Զորեքշաբթի օրը գործն աւելի ծանր կերպարանք մ'առաւ, խռովութեան ժամանակ և Թուրք կին մ'իյնալով մեռաւ, չգիտցուիր ինչ պատճառաւ։ Ասոր վրայ Թուրք կանայք Վեհ. Սուլթանին աղերսագիր մը տալ որոշեցին, և հինգշաբթի օրն իրենց որոշումը կատարեցին։ Վեհ. Սուլթանն այս գործը կարգադրելու հոգն Օսման և Քեռանի փաշաներուն յանձնեց։

Սոֆիայէն եկած լուրեր կը ծանուցանեն թէ յիշեալ քաղաքին մէջ Պուլղարիոյ իշխանին համար յատուկ պալատ մը կառուցման սկսուած է։

Պ. Ֆրէտերիք Սէնթ-Ջոն՝ Պ. Մէլէթի տեղ մայրաքաղաքիս Անգղիական դեսպանատան առաջին քարտուղար անուանեցաւ։

Հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ռուսական Պ. Սթրուվ ճարտարապետ երկրաչափին պաշտօն յանձնուած է Սիլիսթրէի նոր նաւահանգիստը շինել։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ԷՍՀԱՄԸ ՈՒՄՈՒՄԷ

Երեկ իրիկուն գոցուեցաւ		12.13
Այս առաւօտ բացուեցաւ		12,21
կէս օրին		12,23
Բաւմլի երկաթուղի	Ֆր.	43
Թղթադրամ	Փր.	750
Մէթալիք		17 30
Պղինձ	»	450

ԱԶԳԱՅԻՆ

Երեկ Ադգային ժողովը գումարեցաւ Գում-գաբուի Մայր եկեղեցին ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր. և ատենապետութեամբ Վսեմ. Ստեփան փաշայի Ասլանեան։

Ժամ 7 1/2ին ատենը բացուելով, հետևեալ գործողութիւնք կատարեցան։

1. Վերջընթեր նստին ատենագրութիւնն առանց դիտողութեան վաւերացաւ։

2. Եէնի-Գափուէն Ֆրէնկեան Մարուգէ և Էնքսէրճեան Պօղոս էֆէնտիներուն ընտրութիւնը վաւերանալով՝ երեսփոխան հռչակեցան.

3. Տիդրանակերտի և Կարնոյ անդղիական փ. հիւպատոսաց հայատեաց և Թուրքօ-Բրդասէր լինելու մասին Ղազարոսեան Քրիստոսատուր էֆէնտիի հարցումն, և Կարսի Հայ վարժարանաց տեղական կառավարութեան կողմէ փակուած լինելուն վերաբերեալ Գափամաճեան Մինաս էֆի մէկ հարցումն ալ նոյնպէս Ս. Պատրիարքին յղուեցան՝ հարկ եղած պատասխաններն ընդ հուպ տրուելու պայմանաւ։

4. Փափազեան Ստեփան էֆէնտիի մէկ գիրն, որով Կեդր. մետուլի տուամարներն ուղած ատենին երթալ քննելու և դատաստանական խորհրդոյ նիստերուն ներկայ գտնուելով ունկնդրութեան իրաւունք ունենալու համար երեսփոխանաց արտօնութիւն տալ կառաջարկէր, նախաքննութեան յղեցաւ։

5. Ժողովը՝ օրակարգին անցնելով՝ ինչ ինչ վիճաբանութենէ յետոյ տրոյ կանոնագրին վաւերացումը կատարեց։

6. Դեր-Փիլիպոս եպիսկոպոսի երկրորդ մէկ բողոքագիրը կարդացուելով, ինչ ինչ պատճառներու համար խնդիրը վերստին նախաքննութեան յղուեցաւ, և այս անգամ Իրաւաստութեան դիւանին յանձնուեցաւ։

Ժողովին յաջորդ նիստը 15 օրէն պիտի գումարի։

Դերջանէն եկած հեռագիր մը՝ որոյ տարապայման ծանրութեան և խստիւ պահանջման, ինչպէս նաև զօրաց պիտոյքն երկնկայ փոխադրելու մասին ժողովրդեան կրած նեղութեան և դաղթականաց հետզհետէ շատնալէն ծագած տխուր հեւանաց դէմ բողոքելով՝ Ս. Պատրիարքին միջոցաւ կայսերական կառավարութենէն անյապաղ դարման կը խնդրէ, յայտնելով որ հակառակ պարադայի մէջ ժողովուրդը դաղթելու պիտի պարտաւորի։

Հինդշաբթի աւուր Մասիսի մէջ Ղազանճեան մեծ. Կիրակոս էֆէնտիի մէկ նամակին հրատարակութեան առթիւ՝ ինչպէս կը յիշեն ընթերցողք՝ դիտողութիւն մ'ըրած էինք։

Խնդրոյ ներքև իյնող լուրը մեզ հաղորդողը կը ծանուցանէ թէ Պատրիարքարանէն քաղած չէ, այլ վաճառականաց նամակներէ, որք անապահովութեան վրայ հիմնած են եղեր իրենց այն տեղեկութիւնը։

(ԹԵՐԹՕՆ)

ԳԻՏԱԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԵՐ

Կերակրոց աղբեցութիւնն առ հասարակ կենդանեաց և մասնաւորապէս մարդուն վրայ.

Քանի որ անդադարեալ կերպով անցած են այն ժամանակներն, յորում մարդիկ սխալ վարդապետութեամբ մը կամ վարդապետութեան մը սխալ մեկնութեամբ կը ջանային չարչարել իրենց մարմինը և մեռցնել զայն իրը թէ իրենց հոգին փրկելու համար. քանի որ այդ վարդապետութիւնը մեր ազգին վրայ ալ բրած է իւր ազդեցութիւնն, և իւր հետևանքը ցայսօր կը կրենք, կարծեմ աւելորդ չէ ընթերցողաց ուշադրութիւնն հրաւիրել այն ազդեցութեան վրայ, զոր զանազան տեսակ կերակուրք զանազան կերպով կը գործեն առ հասարակ կենդանեաց և մարդուն վրայ։ Սակայն առաջ դիտալ պէտք է թէ մարդս ալ, թէ և բանաւոր, թէ և աւելի կատարեալ, այսու ամենայնիւ չտարբերիր միւս կենդանիներէն իւր բուսական և կենդանական կեանքով։

Այսօր ո՞վ կը տարակուսի թէ աշխարհի մէջ մարդուն ամէն տեսակ յաջողութեան առաջին պայմանն առողջութիւնը և զօրաւոր կազմուածքն են, վասնզի և արդի խորհողներէն մին ըսած է թէ «մարդ յաջողիլ կարենալու համար՝ պէտք է նախ որ +աջ կենդանի մ'ըլլայ. նոյնպէս ազգի մը յաջողութեան գաղտնիքն ալ նոյն ազգին քաջառողջ անհատներէ կազմուած ըլլալուն մէջն է»։ Քաջառողջութիւնն հարկաւոր է ոչ միայն պատերազմի դաշտին վրայ, այլ և ճարտարութեանց տպարիզին մէջ։

Վասն զի ամէն մարդ դիտէ թէ կեանքը մշտնջենաւոր մ'է և յաղթանակը միշտ զօրաւորագունին է։ Թէև այսօր աշխարհի ազգաց վրայ իշխողը նիւթական կոչտ զօրութիւնը չէ, սակայն մարմնական կորովոյ ազդեցութիւնն ալ նուազագոյն չէ։ Ուրեմն անհատներ և ազգեր՝ որք կը փափաքին ապրիլ մշտնջենաւոր, պարտաւոր են և՛ քան զեւ զօրանալ, վասն զի մշտնջենաւորութեան վրայ է։

Բնախօսութիւնը՝ (ֆիզիօլոգիէ) տարբերութեան և բնագիտութեան օգնութեամբ այնպիսի սկզբունքներ գտած է, որոց շնորհիւ առանին կենդանեաց ցեղերն աւելի և բարձրացած են յԵւրոպա. ինչո՞ւ միայն մարդ զրկուի գիտութեան բարիքներէն։

Կերակուրները մարդուն վրայ կ'ազդեն մէկ մը իրենց քանակութեամբ, մէկ մ'ալ իրենց որակութեամբ։ Նախ քանակութեան վրայ խօսինք։ Հասարակ առած մ'եղած է ըսելը «թէ՛ չափազանց շատ և թէ՛ չափազանց քիչ ուտելը վնասակար է»։ սակայն եթէ դիտուններուն կարծիքն հարցնենք, կը պատասխանեն թէ չափազանց քիչ ուտելը չափազանց շատ ուտելէն աւելի վնասակար է, վասն զի մարդ անսուազութեամբ կրնայ անշնչանալ, մինչդեռ չափազանց ուտելովն անհանգստութեամբ մը կամ փսխելով մը կրնայ ազատիլ։

Մանկական հասակէն սկսեալ՝ բընութիւնն՝ այսինքն ախորժակն՝ առաջնորդ բռնելու ենք մեզ, ինչպէս որ բոլոր կենդանեաց և հիւանդներուն համար դրեթէ անսխալ է այն, այնպէս ալ առողջութեան տեսն կրնայ ուղիղ առաջնորդ ըլլալ՝ եթէ սկիզբէն խանգարուած չէ։

Եթէ ազգ վրայ արտաքոյ կարգի միտումներ կը տեսնենք անուշեղէններու համար, չկարծենք թէ այդ քմայք մ'է միայն, այլ բնութեան մի անդիմադրելի պահանջը, որ կուզէ ազգն արտաքոյ կարգի գործունէութեամբ կորուսած տաքութիւնը շաքարով վերահաստատել. վասն զի բնախօսութիւնն ապացուցած է թէ մեր կենդանական տաքութիւնը հայթայթողները մեծաւ մասամբ շաքար և մեր ներսիդին շաքարի փոխուած նիւթերն են։ Մեր լեարդը շաքարի անխոնջ գործարան մ'է։

Նոյնպէս ազգ պատուղներու համար ունեցած մասնաւոր սէրը բընութեան մէկ պահանջն է, վասն զի անոնք իրենց մէջի թթուներովը կը դիւրացնեն մարսողութիւնն։

Որակութեան գալով, հասարակութիւնը կը կարծէ թէ մսեղէն կերակուրները շատ օգտակար չեն, մանաւանդ ազգ։ Եթէ միայն աղքատներն ունենային այս կարծիքը՝ դիւրահասկանալի էր. վասն զի երբ աղուէսը խաղողն չհասնիր՝ «խակ է» կ'ըսէ. սակայն մեծագոյն մասին օրինակը, մանաւանդ աղքատ ընտանեաց ազգ ոմանց արտաքին առատութիւնն հարուստներուն վրայ ալ ներգործած են, և այժմ առհասարակ մարդիկ կը կարծեն թէ բուսեղէն կերակուրներով մնալներն աւելի առողջ և աւելի երկարակեաց կ'ըլլան. բայց այս կարծիքը գիտական որ և է հիմ չունի։ Եթէ նախնի ժամանակաց մարդիկն և այժմու դիւզացիները օրինակ բերին, կը սխալին. վասն զի անոնց և մեր ապրելու կերպերն իրարմէ շատ կը տարբերին։ Բայց ասսի, բոլոր բժիշկներն ու բընախօսներն համամիտ են այս մասին թէ ազգ կերակուրներն ալ դոնէ չափահասներուն կերակրոց չափ սընընդարար ըլլալու են. վասն զի անոնք ոչ միայն իրենց օրական կորուստին (որ իրենց գործունէութեան պատճառաւ աւելի մեծ է) տեղը պիտի լեցնեն, այլ և ամեն օր վրայ պիտի դնեն մեծնալու համար, այնպէս որ՝ եթէ երկար ժամանակ իրենց կորուսածէն աւելի մնուցդ չընդունին, անոնց աճումը՝ կա՛մ բոլորովին կը դադրի կա՛մ կը յամրանայ։

Եթէ ուրիշ ապացոյց մ'ալ խընդրուէր ազգայոց մնուցդի աւելի պէտք ունենալուն, կրնայինք ըսել թէ սովի, նաւարեկութեան և այլ նման դէպքերու ատեն առաջին մեռնողները ազգայք են։

Բնախօսական ուրիշ ճշմարտութիւն մ'ալ այն է թէ այն կերակուրներն որք աւելի կը նմանին մեր մարմինը բաղկացնող մասերուն՝ աւելի դիւրաւ կը մարսուին։ Մարսողութիւնը գործողութիւն մ'է զոր կը կատարենք արիւն և ջղային զօրութիւն սպառելով. օրչափ կերակուրը դիւրամարս ըլլայ այնքան նըուազ զօրութիւն կը մեխենք և այնքան նուազ կը յոգնինք. ընդհակառակն օրչափ դժուարամարս է, այնքան աւելի կը յոգնինք. ուրեմն կարելի եղածին չափ ննդարար և դիւրամարս կերակուրներ տալու է տղոց։ Թերևս ընթերցողք առարկեն թէ ժողովրդեան մեծագոյն մասին՝ նոյն իսկ հարուստներու գաւակները՝ շատ անգամ բուսեղէն կերակուրներով կը մնանին և այսու ամենայնիւ կ'աճին ու կը մեծնան. սակայն միայն մարմնոյն ծառայէն ուշադրութիւն ընելու չէ, այլ նաև պրակտիկան, վասն զի շատ անգամ դեր մարդիկ մեղի առողջ կերևան, մինչդեռ չեն, իրենց նմաններուն հարկ եղած զօրութիւնը կը պակսի։ Իսկ եթէ հասակէն և դիրութենէն զատ մարդոյ կամ ազգ աշխոյժն ու կենդանութիւնն ալ՝ նկատառնենք, տարբերութիւնն աւելի աչքի կը դարնէ բուսակերն և մսակերն կերակուրներով սնանողներուն միջև։

Եթէ տարբեր կերակուրներով սընանող զանազան կենդանիները կամ մարդիկ բաղդատութեան դնենք, անմիջապէս պիտի տեսնենք որ թէ՛ մսաւոր և թէ՛ նիւթական զօրութեան ասպիճանը կերակուրի տեսակէն կախումն ունի։ Ո՞վ չտեսներ կովուն և ձիուն մէջ եղած տարբերութիւնը. մին օրչափ դանդաղ՝ միւսն այնչափ աշխոյժ է. քան զի ձիուն կերակուրն աւելի սննդարար և աւելի դիւրամարս է։ Դարձեալ ոչխարին ապշութիւնն և չան աշխուժութիւնն առակ դարձած են. տարբերութիւնը դարձեալ կերակուրներէն է։ Ընթերցողք թո՛ղ չկարծեն թէ անոնց կազմուածքէն է այդ տարբերութիւնները, վասն զի մի և նոյն ցեղի կենդանիք որ տարբեր կերպով սնանին, տարբեր բնութիւններ կունենան։ Այս բանը նոյն իսկ մարդկային ցեղին մէջ կ'երևայ։ Այն ցեղերն որք անտառներու մէջ կ'ապրին և բուսեղէններով կը սնանին, շատ սառին են թէ՛ մարմնական և թէ՛ մտաւոր ուժով. իսկ անոնք որ որսորդ են և շատ միս կուտեն, թէ՛ ուժով, և թէ՛ գործունեայ են զոր օրինակ Քաֆիրներն և Ամերիկեան Հնդիկներն։ Եթէ այսօր միլիոնաւոր Հնդկաստանցիք կը հնազանդին սակաւաթիւ Անգլիացւոյ, անոր համար է մասամբ մը, որ առաջինները բրինձ կուտեն միայն, իսկ վերջինները միս կուտեն,

Եթէ նոյն իսկ պատմութեան վրայ ակնարկ մը նետուի, պիտի տեսնուի որ աշխարհակալ և զօրաւոր ազգերը միշտ լաւ սնած էին։

Երկաթուղեայ ձեռնարկուները, կանուխէն դիտած են որ այն գործաւորներն որք մսով կը սնանին, միայն հացով կամ բանջարեղէններով սնողներէն շատ աւելի կ'աշխատին. վասն որոյ երբ Անգլիացի ճարտարագէտք Եւրոպայի ցամաքին վրայ երկաթուղւոյ մը շինութեան կը ձեռնարկեն, նախապատիւ կը համարին իրենց մտակերը հայրենակիցները բանեցնել։

Անգլիացի Սբէնսըր գիտնականն ինք իր վրայ փորձել ուզելով կերակրոց ազդեցութիւնը, շարունակ վեց ամիս միայն բուսեղէններով կերակուր է, և տեսեր է որ իւր թէ՛ ֆիզիկական և թէ՛ մտաւոր զօրութիւնն զգալի կերպով նուազած էին։

Այսքան դիտողութիւններ և փորձեր կ'առաջնորդեն մեզ սա եզրակացութեան թէ՝ օրչափ սննդարար և դիւրամարս ըլլան մարդուն և առ հասարակ կենդանեաց կերակուրները, այնքան աւելի կըլլայ թէ՛ մարմնոյ և մտաց զօրութիւնն։ Այս մասին ընթերցողաց յորդոր կարդալն աւելորդ կը համարիմ, քանի որ անժխտելի ապացոյցներ կը հաստատեն մեր ըսածին ճշմարտութիւնը։

Տրապիզոն ՀԱՍԱԿ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ցփխիսու Հայերէն պարբերական հրատարակութեանց՝ Ասիական Տաճկաստանի Յամուսի հետ յարաբերութեան մէջ գտնուող քաղաքացւոյ մէջ բաժանորդ դրուիլ ցանկացողաց դիւրութիւն մատուցանելու փափաքանօք՝ իմ պատրաստականութիւնս կը յայտնեմ, թէ՝ ով որ փորձ ուզէ, Մեղու Հայաստանի և Մշակ օրագրի բաժանորդ դրուիլ կը ցանկայ, վստահութեամբ կրնայ դիմել ինձ իմ հասցէին. «Լ. Եդուարդ Մուրատեան 'ի Յամուսն» ուղղեալ նամակով մը։

Պայմանք բաժանորդագրութեան

«Փորձ» ամսագիր, տարեկանը 10 ռուպլի թղթադրամ։ «Մեղու Հայաստանի» լրագիր, տարեկանը 8 ռուպլի. վեցամսեայ 5 ռուբլի թղթադրամ. «Մշակ» օրագիր, տարեկանը 10 ռուբլի, վեցամսեայ 6 ռուբլի թղթադրամ։

Բաժանորդագրութիւնք յունվար և յուլիս ամիսներէն կ'սկսուին Մեղուի և Մշակի համար.

Ամեն ծովեզերեայ քաղաքաց համար բաժանորդութեան դիները անփոփոխ նոյնն են։

Բայց ցամաքային քաղաքաց համար թղթատարութեան ծախքը պէտք է աւելցնել. Ռուսական թղթադրամի փոխարէն օրաւան ընթացիկ դնով ամեն տեսակ մետաղեայ դրամ կընդունուի։

Լ. Ե. Մուրատեան

Յ. Գ. Հատատ աղբիւրէ լսած եմ որ առաջիկայ յունվար ամսոյ սկիզբէն Մեղու Հայաստանի լրագիրը բաժանորդական ընկերութեան մը պաշտպանութեամբ տպահովուած՝ ամեն օր պիտի հրատարակուի։

ԻԼԱՆ

Նկատմամբ Նանը Ազիզ խարէսի տէկիրմէնէրի հասըլաթնատ թաբիի գարարընատ իմիպարէն պիրայ միրուրնէ գատար եէվմի օն ալթը պին ալթը եիւզ ալթմըշ գըյէսի դալարրըլմադ մէ էսմանը քէրէկի դալարրմադատն էվվել սիմ մէճիտիյէ երիկիրմի դրուշ հիսապիյլէ նագատէն մէ բէշինէն մէրիմմէ չարթը մէ շէրայիթը սայիրէսիյլէ ֆիրուխթ իսիլէճէք օլան պէշ եիւզ պին գըյէ քէբէկին իճրա իսիլէն միւզայիտէսինատ պէհէր գըյէսի օն պիր փարա մէ պիր փարանըն եիւզ հիւզինատէն եիկիրմի պէշ ճիւզինէ թալիպի էօհատսինատ գալմըշ մէ թըշրինի էվվէլը բումինին սէքիզինճի բազար իրթէսի կիւնիւ թէքրար միւզայիտէսինին իճրասը մուգարրէր պուլունմուշ օրմաղա, իշթիրասընա թալիպ օլանլարըն եէվմի մէղքիւրատ Տարի Շուրայի ասքերիյէ կէլմէյէրի։

3 Թըշրինի էվվէլ 1879

Պասլը Մէրաասքէրի

ԳԸԶ ԳՈՒԼԷՍԻ

ԳՈՐԾԱՐԱՆ

Էնէյէ Ժիսիոսի

Զիչէք Պաղար Սուլթան

Համամ փողոց թիւ 2

և մեծ մթերանոց 'ի նոյն փողոց թիւ 4'ի

Սոյն գործարանին անօրէնութիւնն, որ երկար տեսնէ 'ի վեր ծըխախոտի առևտրով կ'զբաղի, մեծ քանակութեամբ Եէնիճէի, Տրամանի և Պաֆրայի ծխախոտ պատրաստած է։ Մեր մթերանոցը պատուել ուզող անձինք, ինչպէս նաև ծխախոտճառք կրնան տպահով ըլլալ որ Այսուլուէն ուղղակի բերուած մեր ծխախոտներուն թէ՛ որակութենէն և թէ՛ գիներէն շատ գոհ պիտի ըլլան։

Մեր գործարանէն ելած ծխախոտները մայրաքաղաքիս ամեն վաճառատուները կը գտնուին։ Մեր մթերանոցը մանաւոր յանձնարարութիւններ ալ կ'ընդունուի, ինչպէս նաև թղթակցութիւն Եւրոպոյ և օտար պիւռօներու հետ՝ խիստ չափաւոր գիներով։

Սմբատ Աբեղեան և Ընկ.

ՏՕՔԵՐՈՒՄ Մ. ՄԱՐԹԻՆ

վերջնա մեքենագրեցնել Տիրոջմա ապրիլ մի գրանցեալ մեքենագրեցնել պիտի ունենան մեքենագրեցնել Ամերիկան ամէն գրեալ Տօքթէր Լիմմէր օրան Տօքթէր Մարտին պրա ամէնա Օրթոգրաֆէոյ գրեալ գրեալ խանութներում Հեր կիսն ասած ՅԱ գրասենեակ խանութներում Արևելեան Ամերիկայի մասին 6 ա խանութի վրա ասած Դարձեալ Ամերիկայի մասին գրեալ գրեալ գրեալ